ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1952 Общественные науки

Շ. Հարությունյան

ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Լենինի և Ստալինի հավատարիմ աշակերտ և մերձավորագույն զինակից Ստ. Շահումյանը ուրույն տեղ է գրավում հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ։ Նա մարքսիզմ-լենինիզմի տեսության ամենաակնառու ներկայացուցիչներից մեկն է եղել, որի աշխատություններն ունեն թեորիական մեծ արժեք։

Դեռևս իր պատանեկական տասակում Ստ. Շահումյանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել աշակերտական խմբակներում և կրել ռևոլուցիոն-դեմոկրատներ Չերնիշևսկու, Դերցենի, Դոբրոլյուբովի, Մ. Նալբանդյանի և ուրիշների գաղափարական ազդեցությունը։ Հետագայում նա ծանոթանում է մարքսիզմի կլասիկների երկերին, որոնք հսկայական ազդեցություն են գործում երիտասարդ Շահումյանի վրա։ Այդ շրջանից սկսած ճշտորոշվում է Շահումյանի հասարակական-քաղաքական ուղին։ Լինելով պատրաստված մարքսիստ, նա, ընկեր Ստալինի անմիջական ղեկավարությամբ, ծավալում է ռևոլուցիոն մարքսիզմի պրոպագանդան Անդրկովկասում։

Ստ. Շահումյանը Վ. Ի. Լենինի և Ի. Վ. Ստալինի գլխավորությամբ անհաշտ պայքար է մղել մարքսիզմին խորթ և թշնամի իդեոլոգիաների դեմ, նա իր բազմաթիվ ելույթներում, հրապարակախոսական հոդվածներում և աշխատություններում բարձր պահելով լենինյան-ստալինյան ինտերնացիոնալիզմի վեհ դրոշը, ջախջախիչ հարված է հասցրել բուրժուական նացիոնալիզմին։

Բոլշևիկ Շահումյանը գաղափարական պայքարում եղել է կրքոտ, անհաշտ, մինչև վերջ նվիրված բանվոր դասակարգի ազատագրության գործին։

Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը փայլուն կերպով պաշտպանում էին մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը ինչպես պարտիական-կազմակերպական հարցերում, այնպես էլ պատմագիտության, գրականագիտության, փիլիսոփայության, տնտեսագիտության և այլ բնագավառներում։ Շահումյանը պատմությունը, գրականությունը, փիլիսոփայությունը և արվեստը համարում էր պրոլետարիատի դասակարգային պայքարի իդեոլոգիական զենքերը, մասսաներին կոմունիզմի ոգով դաստիարակելու հզոր միջոց։ Նրա պատմագիտական, գրականագիտական, փիլիսոփայական և տնտեսագիտական աշխատությունները տոգորված են մարքս-լենինյան գաղափարախոսությամբ, աչքի են ընկնում իրենց սկզբունքայնությամբ, պարտիականությամբ։

Շահումյանի պատմագիտական, գրական հայացքների ձևավորումն ու զարգացումը տեղի է ունեցել նրա ռևոլուցիոն-քաղաքական գործունեությանը համընթաց և կազմում է այդ գործունեության օրգանական մասը։

Տակավին 24 տարեկան հասակում (1902 թ.), Ղազարոս Աղայանի 40-ամյա գործունեության առթիվ գրած իր նշանավոր ճառում Ստ. Շահումյանը սուր քննադատության է ենթարկում ցարական Ռուսաստանում գոյություն ունեցող դաժան ռեժիմը, մերկացնում է հայ բուրժուա-ազգայնական ինտելիգենցիային, նրա կեղծավոր ու ստրկամիտ վարքագիծը։ Այդ ճառում Շահումյանը հանդես է գալիս, ինչպես ինքն է ասում, «նոր աշխարհայացքով զինված, ռուսաց նորագույն ռևոլուցիոն ավազանում մկրտված» ուսանողության անունից։

Իր ռևոլուցիոն-պարտիական պրակտիկ գործունեության զուգընթաց Ստ. Շահումյանը 1905—1916 թթ. գրել է տեսական մի շարք արժեքավոր աշխատություններ։

Նրա «Դասակարգերը ժամանակակից եվրոպական հասարակության մեջ» աշխատությունում (1905 թ.) շարադրված են պատմական մատերիալիզմի մի քանի հիմնական դրույթները հասարակական-տնտեսական ֆորմացիաների, դասակարգերի և դասակարգային պայքարի մասին։

Պատմագիտական խոշոր նշանակություն ունի 1905 թ. գրված «Էվոլուցիոնիզմը և ռևոլուցիոնիզմը հասարակական գիտության մեջ» աշխատությունը, որի մեջ մարքսիզմի սկզբունքների պաշտպանության գիրքերից քննադատված են միջազգային օպորտունիզմի՝ ռևիզիոնիզմի պարագլուխ Էդուարդ Բերնշտեյնը և բուրժուական սոցիոլոգ Վերներ Զոմբարտը, պարզաբանված է էվոլուցիոնիզմի և ռևոլուցիոնիզմի էությունը, արտադրական հարաբերությունների և արտադրողական ուժերի փոխհարաբերությունները, պատմության շարժիչ ուժերի հարցը և այլն։

«Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» (1906 թ.), «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» (1914 թ.). «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը» (1916 թ.) և մի քանի ուրիշ աշխատություններում Ստ. Շահումյանը շարադրելով մարքսիստական ուսմունքը ազգային հարցի մասին, ցախցախիչ հարված է հասցնում ազգային հարցում եղած բուրժուական և մանր բուրժուական, նացիոնալիստական բոլոր դրույթներին, պահանջելով հասարակական հարցերը քննել «Սոց-դեմ.-ի ուժը և հպարտությունը կազմող դիալեկտիկական մեթոդով»[1]։

Ստ. Շահումյանը գրել է նաև մի շարք հոդվածներ գրական հարցերի շուրջ՝ «Ղազարոս Աղայանին՝ նրա գործունեության քառասնամյակի առթիվ» (1902 թ.), «Ընթերցողի տարակուսանքը» (1910 թ.), «Գորկու մասին» (1911 թ.), «Մի քանի խոսք Լ. Ն. Տոլստոյի կրոնի մասին» (1911 թ.), «Հայ գրականության ժողովածուի մասին» (1916 թ.), «Դիտողություններ «Նոր առավոտ» պոեմի մասին» և այլն, որոնք հանդիսանում են հայ մարքսիստական գրականագիտության լավագույն նմուշներից։

Ուշագրավ աշխատություն է 1912 թվականին Ստ. Շահումյանի գրած

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948 թ., էջ 163։ Ընդգծումը Ստ. Շահումյանինն է։

«Վ. Փափազյանը պատմագետի դերում» պատմագիտական մեծածավալ հոդվածը[1]։

Պետք է նկատել, որ Ստ. Շահումյանի հանդես գալը այս հոդվածներով, պատահականություն չէր։ Մարքս-լենինյան գաղափարախոսությամբ առաջնորդված նրա գրականագիտական և պատմագիտական հոդվածները հանդիսանում են բոլշևիկների պարտիայի կողմից հայկական նացիոնալիզմի դեմ մղված գաղափարական անհաշտ պայքարի ցայտուն արտահայտությունները։ Դրանով Ստ. Շահումյանը կատարել է մեր պարտիայի առաջադրանքը՝ մարքսիզմ-լենինիզմի տեսական հզոր զենքով ջախջախիչ հարված հասցնել հայ գրականագիտության և պատմագրության մեջ հանդես եկած բուրժուա-նացիոնալիստական հոսանքներին։

Խոսելով պատմական անցյալը վերարտադրող գրողների ստեղծագործությունների մասին, Ստ. Շահումյանը գրում էր, որ այդ գրողների երկերը «թագավորների, «մեծամեծների» ազգագուտ գործունեության գրվատումներով, հայոց աշխարհի հրաշալի անցյալի իդեալականացումով,—ոչինչ չտալով հանդերձ ընթերցողի մտքին, կշռյեն և կզարգացնեն նրանց կույր ազգասիրական զգացմունքները»[2]։

Ստ. Շահումյանը առաջին հայ մարքսիստներից է, որ վերոհիշյալ հոդվածներում հայ պատմագրության և հայ գրականագիտության հարցերը քննել է նոր, մարքս-լենինյան մեթոդով և խիստ կերպով քննադատել հայ անցյալ պատմագրության արատավոր կոնցեպցիան։

Հայ ժողովրդի պատմության, հայ անցյալ հասարակական մտքի պատմության հարցերը քննելիս, սովետական պատմաբանը չի կարող չօգտագործել Շահումյանի մտքերը, որոնք հսկայական նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմության կարևորագույն էջերի գիտական լուսաբանության համար։

Դժբախտաբար Շահումյանի պատմագիտական հայացքները մինչև այժմ բավարար չափով չեն ուսումնասիրված։

Ներկա հոդվածում մենք փորձում ենք համառոտակի չարադրել Շահումյանի հայացքները հայ ժողովրդի պատմության մի քանի հարցերի վերաբերյալ, գերազանցապես հենվելով նրա «Վ. Փափազյանը պատմագետի դերում» հոդվածի վրա։

Այդ հոդվածում Շահումյանը քննության է ենթարկում «Դրվագներ հայոց պատմությունից» ընդհանուր վերնագրով լույս տեսած 9 գրքույկները, որոնք հրատարակվել էին Բաքվի հայոց Կուլտուրական Միության կողմից։

Գրքույկների մեծ մասը պատկանում է հայ գրող Վ. Փափազյանի գրչին («Արտաշես երկրորդ», «Գագիկ երկրորդ», «Թորոս իշխան», «Լևոն երկրորդ», «Սահակ և Մեսրոպ», «Վարդանանց պատերազմը»)։

Շահումյանը ամենևին չժխտելով հանդերձ Վ. Փափազյանի արժանիքները որպես գրողի և գրականագետի, նրան համարելով «հմուտ գրող»,

---

[1] Այս արժեքավոր և ուշագրավ հոդվածը առաջին անգամ հրապարակվել է 1941 թ. «Սովետական գրականություն» ամսագրի № 12-ում, իսկ այնուհետև զետեղված է 1948 թ. հրատարակված Ստ. Շահումյանի «Ընտիր երկեր»-ում, էջ 337—358։

[2] Ստ. Շահումյան. Ընտիր երկեր, էջ 337։

«առողջ գեղարվեստական», «հայանի գրականագետ», և այլն՝ սուր քննադատության է ենթարկում նրա պատմագիտական հայացքները։

«Դրվագների» հեղինակներից բացի, Ստ. Շահումյանը մի շարք առիթներով քննադատել է նաև այլ գրողների, որոնք այս կամ այն կերպ զբաղվել են հայ ժողովրդի պատմությամբ կամ գրականության պատմությամբ։ Նա սուր քննադատության է ենթարկել դաշնակ Ե. Թոփչյանին, որի երկերը համարել է «տիրացուական», գրված կղերական տեսակետով, տիրացուական աշխարհայացքով։ Ստ. Շահումյանը մերկացրել է նրա նացիոնալիզմը[3]։

Ստ. Շահումյանը խիստ բացասական վերաբերմունք է ցույց տվել նաև բուրժուական նացիոնալիստներ Ռ. Անանունի և Պ. Մակինցյանի նկատմամբ, խստորեն քննադատելով „Сборник армянской литературы" ժողովածուին կցված առաջինի „Армянский вопрос в России" և երկրորդի „Очерк армянской литературы" հոդվածները[3], ինչպես նաև այլ հոդվածներ։

* * *

Շահումյանը գրական քայլ համարելով «Իարվի հայոց Կուլտուրական Միությանը» նախաձեռնությունը՝ հայ ժողովրդի պատմությունը ժողովրդին մատչելի դարձնելու համար նման գրքույկներ հրատարակելու վերաբերյալ, քննադատում է այդ Միությանը այն բանի համար, որ նա փոխանակ գիտական ճշտությամբ հայ ժողովրդի անցյալի պատմությունը արտացոլող գրքույկներ հրատարակելու, լույս է ընծայել այնպիսի աշխատություններ, որոնք ոչ միայն ճշմարիտ գիտելիքներ չեն կարող տալ ժողովրդին, այլև՝ պատմական դեպքերի քմահաճ աղավաղումով կարող են սխալ կողմնորոշում տալ նրան։

Ինչ է պահանջում Ստ. Շահումյանը պատմաբանից կամ անցյալի դեպքերը գեղարվեստական գրականության նյութ դարձնող հեղինակից. ամենից առաջ պատմական մոտեցում՝ անցյալի դեպքերի ու դեմքերի գնահատման։

«... Հարկավոր է,—գրում է Շահումյանը,—որ գրողն ունենա քիչ թե շատ լուրջ պատմական աշխարհայացք, պատմական տեսակետ, որի օգնությամբ նա կարող լինի քննադատորեն վերաբերվել իր նյութին և իր գրվածքով կրթական ու զարգացուցիչ ազդեցություն ունենա ընթերցողի վրա[4]։

Ստ. Շահումյանի մյուս պահանջը պատմաբանից և գրողից, այն է, որ նա անցյալը պատկերելիս հարազատ մնա իրական փաստերին, եղելություններին, քմահաճ կերպով չաղավաղի, չփոփոխի դրանք։ Միայն այդ դեպքում, ասում է Շահումյանը, նա կկարողանա որոշակի գաղափար տալ ժողովրդին՝ իր նախնիների մասին, մինչդեռ, ինչպես Վ. Փափազյանի, այնպես էլ «Դրվագների» շարքով լույս տեսած մյուս գրքույկների հեղինակների գրվածքներում չկան լուրջ գիտելիքներ, հավատի տեղեկություն-

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 337, 356, 358։

[2] Նույն տեղում, էջ 349։

[3] Ստ. Շահումյան, Գրականության մասին, Երևան, 1948 թ., էջ 107։

[4] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 337։ Ընդգծումը Ստ. Շահումյանինն է։

ներ հայոց պատմության մասին։ Դրա փոխարեն տրված են առասպելական ու հեքիաթախառն պատմություններ։

«Նախ և առաջ,—գրում է Շահումյանը,—դուք չեք տեսնում, որտեղ է վերջանում գրվածքի մեջ պատմական իրողությունը, փաստը, որտեղ է սկսվում առասպելը, ավանդությունը և ապա որտեղ է «ծայր առնում» հեղինակի, որպես վիպագրողի, բելետրիստի՝ ֆանտազիան»[1]։

Ստ. Շահումյանը սուր քննադատության է ենթարկում «Դրվագներ» շարքի հեղինակների հակապատմական, իդեալիստական կոնցեպցիան՝ պատմական դեպքերի գնահատման գործում։ Նրանք պատմական դեպքերը փոխանակ բացատրելու սոցիալ-տնտեսական հարաբերություններով և քաղաքական իրադարձություններով, անհատներին են վերագրում հասարակական-քաղաքական երևույթների առաջացումը, անհատների քմահաճույքով, նրանց ընավորության գծերով են բացատրում քաղաքական այնպիսի կարևոր իրադարձություններ, ինչպիսիք են հայ-իրանական երկարատև պատերազմներն ու հակամարտությունները։

Բացահայտելով Արտաշես երկրորդի մասին Վ. Փափազյանի առասպելախառն պատմության արատավոր կողմը, Շահումյանը գրում է. «Ոչ մի փորձ բացատրելու՝ երկու հարևան պետությունների առնվազն 20 տարվա ընթացքում եղած հարաբերությունները անմիջապես շոշափող և Հայաստանի ապագան որոշող այդ հարցը։ Փափազյանի գլխում իսկի չի էլ ծագում այդ հարցը»[2], նա այդ փոխհարաբերությունները բացատրում է այն բանով, որ «Արաբեն այնպես ցանկացել է «ժպտալ» և ժպտացել է, կամ ամենաշատը, որ նա սիրել է մանուկ Արտաշեսին, որովհետև գեղեցիկ երեխա է եղել—«կարմրաթուշ և քնելիս եղել է մուշ-մուշ...»[3]։ «Մինթե Գ. Փափազյանը և նրա հրատարակիչները սա համարում են պատմություն», գրում է Շահումյանը վրդովված[4]։

«Դրվագների» հեղինակներն իրենց ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելով օտարերկրյա բռնակալների դեմ ուղղված պատերազմների վրա, մոռացության են տալիս երկարատև, ծանր այն պայքարը, որ աշխատավոր ժողովուրդը դարեր շարունակ մղել է ներքին շահագործողների դեմ։

Անկարող լինելով հասկանալ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքի, հասարակության պատմական զարգացման օրինաչափությունները, այդ պատմաբանները չեն կարողացել բացատրել Հայաստանում շարունակ տեղի ունեցող արտաքին կռիվների, պատերազմների իսկական պատճառները։ Պատմությանը հեռվից՝ թեթևակի նայող, կամ, ինչպես Շահումյանն է ասում, գործածելով ռուսական գարձվածքը с птичьего полета նայող պատմաբանին, թվացել է, որ միակ կարևորը պատմության մեջ արտաքին դեպքերն են, մինչդեռ «ժողովուրդների կյանքը, նրանց պատմության ընթացքը պայմանավորող ու որոշողը ոչ թե այդ արտաքին դեպքերն են, որքան էլ ազդեցիկ ու էֆեկտավոր լինեն նրանք, այլ ժողովրդական մասսաների առօրյա, ընթացիկ, «խաղաղ» տնտեսական կյանքը, նրանց արդյու-

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 342։

[2] Նույն տեղում, էջ 342—343։

[3] Նույն տեղում, էջ 343։ Ընդգծումը Ստ. Շահումյանինն է։

[4] Նույն տեղում։ Ընդգծումը Ստ. Շահումյանինն է։

նարերական պրոցեսը, նրանց ներքին դասակարգային հարաբերություն-ները»[1].

Մերկացնելով հայ պատմագրության արատավոր կողմերը, Ստ. Շահումյանը նշում էր, որ ամբողջ հայոց պատմությունը ըստ մեր «պատմաբաններից» ներկայացվում է ոչ այլ կերպ, քան բարի ու չար հրեշտակների կռիվների, մի կողմից «ազգասեր» ու «առաքինի» հայ թագավորների, իշխանների և մյուս կողմից ազգուրաց, ազգի դավաճան թագավորների ու իշխանների կռիվների պատմություն. «Եթե չլինեին ներքին «երկպառակությունները», «դավաճանությունները» հայ ազգին ոչ ոք չէր կարող դիպչել և նա կապրեր իր բարի հրեշտակ թագավորի ձեռքի տակ գոհ ու երջանիկ»[2]։ «Այդ խոսքերի մեջ,—շարունակում է Շահումյանը,—ամփոփվում են մեր ամբողջ «ազգային» պաշտոնական ինտելիգենցիայի, գրողների պատմական աշխարհայացքը, նրանց մտածելակերպը, նրանց լոմանդակ, այսպես ասած «պատմա-փիլիսոփայությունը»[3]։

Նման բացատրություն տալով պատմական դեպքերին, այդ պատմաբաններն ու գրողները հայ ժողովրդի ամբողջ տառապանքը բացատրել են ոչ թե սոցիալական հակամարտություններով, դասակարգային հակասություններով, այլ պաշտպանելով կղերա-պահպանողական գաղափարախոսության կոնցեպցիան, բացատրել են նախարարների անմիաբանությամբ, դավաճանությամբ և երկպառակությամբ։ «Բայց ինչի՞ց են ծագում, ինչով են պայմանավորվում այդ դավաճանությունները, անմիաբանությունը, երկպառակությունները,—գրում է Ստ. Շահումյանը,—այդ հարցը չեն տալիս իրենց պ. Փափազյանը և մյուսները»[4]։ Հակադրվելով պաշտոնական պատմագրությանը, Ատ. Շահումյանը գրում է. «Պատմությունն այն ժամանակ դադարում է լինել հեքիաթ, հասարակ պատմվածք և դառնում է իսկապես պատմություն, երբ նրա մեջ հայտնի անցքերի, դեպքերի, պատմական անձնավորությունների գործունեությունը ենթարկվում է լուրջ քննական լուսաբանության և ցույց է տրվում անցքերի ու մարդկային գործողությունների պատճառական կապը և օրինաչափությունը»[5]։

Ստ. Շահումյանը սուր քննադատության է ենթարկում Վ. Փափազյանի և մյուս հեղինակների մոտ՝ թագավորների, իշխանների, հոգևորականների իդեալականացումը։

Մեջ բերելով Վ. Փափազյանի «Արտաշես երկրորդ» գրքույկից հետևյալ կտորը, թե «Արտաշեսի ժամանակ հայոց աշխարհում անմշակ հող չէր գտնվում, ոչ սարերի վրա և ոչ էլ դաշտերում. ամեն տեղ եռում էր կյանքը։ Ժողովուրդն ուրախ ու զվարթ՝ ցանում էր, մշակում, հնձում ու քաղում և լիովին վայելում իր քրտինքի արդյունքը»[6], Շահումյանը ջախջախիչ քննադատության է ենթարկում Վ. Փափազյանին այն բանի համար, որ նա դեմոկրատ պատմաբանի հավակնություն ունենալով հանդերձ, «բարերար» ու «հրաշագործ» է դարձնում հայոց Արտաշես թագավորին, որն իբր թե ազատել է ժողովրդին հարկերից, նոր հողեր ու «առանձնաշնոր-

[1] Ստ. Շահումյան, էջ 351։ Ընդգծումը Ստ. Շահումյանինն է։
[2] Նույն տեղում, Ընտիր երկեր, էջ 347։
[3] Նույն տեղում, էջ 348։
[4] Նույն տեղում։
[5] Նույն տեղում, էջ 349։ Ընդգծումները Ստ. Շահումյանինն են։
[6] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 340։

հուներ» է տվել նրան։ Հետաքրքիր է, որտեղից է վերցրել այդ «հողերը» և ում հաշվին են տրված այդ «առանձնաշնորհումները», միանգամայն իրավացիորեն հարց է տալիս Ստ. Շահումյանը։ «Հետաքրքրական է մանավանդ այդ «լիովին վայելելը»,—գրում է Ստ. Շահումյանը,—մինչև այժմ մենք համոզված էինք, որ այն օրից, երբ հասարակության մեջ առաջ են եկել աշխատանքի բաժանումը և դասակարգային շերտավորումներ, երբ գոյացել են իշխաններ, հոգևորականներ և թագավորներ՝ ոչ մի ժողովուրդ, ոչ մի երկրում չի վայելել լիովին իր աշխատանքի արդյունքը»[1]։

Թագավորների, իշխանների և հոգևորականների իդեալականացումը հատուկ էր նաև «Դրվագներ» շարքի մյուս գրքույկներին։

Ստ. Շահումյանը քննադատության է ենթարկում վերոհիշյալ գրքույկների հեղինակներին անցյալի պատմությունը խեղաթյուրելու համար։ «Դագիկ երկրորդին բառի բուն նշանակությամբ իդեալականացնում է պ. Փափազյանը, որպես իր ամբողջ կյանքում միայն ժողովրդի բարօրությանը նվիրված թագավոր»,—գրում է Ստ. Շահումյանը։ Այդպես իդեալականացված են եղել նաև Թորոս իշխանը, Լևոն երկրորդը և մյուսները, որոնց մասին նույնպես խոսում է Շահումյանը։

Անցյալի իդեալականացումը, պատմական Հայաստանում դասակարգային հակամարտությունների սքողումը արդյունք չէր պատահականության, այլ հետապնդում էր շատ որոշակի քաղաքական նպատակ։ Հայ կղերա-բուրժուական պատմաբաններն ու գրողները հայ ժողովրդի անցյալը ներկայացնելով դասակարգային բախումներից զերծ, «հաշտ ու խաղաղ» մի հասարակության պատմություն, նպատակ ունեին աշխատավորական մասսաներին հեռու պահել քաղաքական պայքարից։

Միանգամայն իրավացիորեն քննադատելով գրքույկների հեղինակների կղերա-պահպանողական կոնցեպցիան, Շահումյանը նշում է, որ պատմական անցյալի իդեալականացումը միայն «Դրվագների» հեղինակներին հատուկ չէ, այլ առհասարակ բուրժուական պատմագրության, որը ամեն կերպ ջանում է դասակարգային հակամարտությունները սքողել «ներքին երկպառակության» հակագիտական թեզով. «Պ. Փափազյանը և մյուսները,—գրում է Շահումյանը,—որոնց համար կա միայն «Հայաստան» բառը և ավելի ոչինչ, իհարկե չեն կարող ոչինչ ասել նրա առանձին ինքնուրույն մասերի, ներքին դասակարգային կազմի և դասակարգային կռիվների մասինը»[2]։

Շահումյանը ցույց է տալիս, որ կղերա-բուրժուական պատմագրությունը, այդ թվում և «Դրվագների» հեղինակները, չեն փորձում տալ պատմական Հայաստանի հասարակական տարբեր հոսանքների բնութագիրը, չեն լուսաբանում սոցիալ-տնտեսական հարաբերությունները, չեն բացատրում նախարարության դերը հայ հասարակական-քաղաքական կյանքում և այլն։ Եվ եթե այդ պատմաբանների ու գրականագետների երկերում երբեմն կարելի է հանդիպել «բնական տնտեսություն», «կալվածատիրական-ավատական կառավարություն» արտահայտությունների, ապա օտար պատմագրությունից մեխանիկորեն փոխառնված այդ բառերը դառնում են բովանդա-

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 345։

[2] Նույն տեղում, էջ 350։

կազուրի, երբ դրանք չեն հիմնավորվում պատմական Հայաստանի սոցիալ-անտեսական կյանքի վերլուծությամբ, չեն բացահայտում յուրաքանչյուր երկրի, տվյալ դեպքում Հայաստանի ներքին յուրահատկությունները։ «Պ. Փափազյանը լսել է,—գրում է Ստ. Շահումյանը,—որ եվրոպական ժողովուրդները ունեցել են միջին դարերում «կալվածատիրական-ավատական» (ֆեոդալական) շրջան և կարծում է, որ առանց որևէ ուսումնասիրության ու բացատրությունների, առանց վերապահումների կարող է այդ բառը գործածել հայոց հին պատմության նկատմամբ»[1]։

Անշուշտ, այս տողերից չպետք է ենթադրել, որ Շահումյանը ժխտել է ֆեոդալական հարաբերությունների գոյությունը Հայաստանում։ Նա պահանջում էր, որ գիտական մեկնաբանությամբ ներկայացվեն այդ հարաբերությունները և բացահայտվեն նրանց առանձնահատկությունները։

Անտեսելով դասակարգային հակամարտությունները պատմական Հայաստանում, վերոհիշյալ հեղինակները առհասարակ անտեսել են պատմությունը կերտողին՝ աշխատավոր ժողովրդին. նրանց մոտ կան միայն թագավորներ ու իշխաններ, չկա ինքը ժողովուրդը, չի երևում նյութական բարիքներ արտադրող մարդը աշխատանքի պրոցեսում, արտադրության մեջ։

Վ. Ի. Լենինը «Կարլ Մարքս» աշխատության մեջ խոսելով նախամարքսյան պատմական թեորիաների մասին, գրում է. «Նախկին թեորիաները չէին ընդգրկում հենց բնակչության մասսաների գործողությունները, մինչդեռ պատմական մատերիալիզմն առաջին հնարավորություն տվեց բնա-պատմական ճշտությամբ հետազոտել մասսաների կյանքի հասարակական պայմանները և այդ պայմանների փոփոխությունները»[2]։

Ընկեր Ստալինը «ՀամԿ(բ)Պ պատմության համառոտ դասընթացի» մեջ խոսելով պատմական գիտության մասին, գրում է. «Այս նշանակում է, որ հասարակության զարգացման պատմությունը՝ ամենից առաջ արտադրության զարգացման պատմությունն է, դարերի ընթացքում իրար փոխարինող արտադրաեղանակների պատմությունն է, արտադրողական ուժերի և մարդկանց արտադրական հարաբերությունների զարգացման պատմությունը։

Նշանակում է, հասարակական զարգացման պատմությունը, դրա հետ միասին, հենց նյութական բարիքներ արտադրողների իրենց պատմությունն է, արտադրական պրոցեսի հիմնական ուժեր հանդիսացող և հասարակության գոյության համար անհրաժեշտ նյութական բարիքների արտադրությունը կենսագործող աշխատավոր մասսաների պատմությունն է։

Նշանակում է, պատմական գիտությունը, եթե նա ուզում է իսկական գիտություն լինել, այլևս չի կարող հասարակական զարգացման պատմությունը հանգեցնել արքաների ու զորավարների գործողություններին, պետություններ «նվաճողների» ու «աշխարհակալների» գործողություններին, այլ, ամենից առաջ, պետք է զբաղվի նյութական բարիքներ արտադրողների պատմությամբ, աշխատավոր մասսաների պատմությամբ, ժողովուրդների պատմությամբ»[3]։

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 352—353։ Ընդգծումը Ստ. Շահումյանինն է։

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 57։ Ընդգծումը Վ. Ի. Լենինինն է։

[3] ՀամԿ(բ)Պ պատմություն։ Համառոտ դասընթաց, Հայպետհրատ, 1950, էջ 163։

Ստ. Շահումյանը պատմական մատերիալիզմի պաշտպանության դիրքերից պահանջում էր պատմաբաններից և գրականագետներից, որպեսզի նրանք ցույց տան, թե ինչպես է ապրել հայ ժողովուրդը անցյալում, ինչպիսի մասնակցություն է ունեցել նա արտադրության պրոցեսին, «Որո՞նք են եղել նրա արտադրության, արդյունաբերության միջոցները և ձևերը, նրա արհեստներն ու արվեստները, նրա առևտուրը և այլ ներքին ու արտաքին տնտեսական հարաբերությունները։ Ի՞նչ տեսակ հասարակական կազմակերպություններ, հիմնարկություններ է ունեցել նա, որոնց միջոցով մղել է իր գոյության կռիվը բնության և օտար հասարակությունների հետ։ Նրա ընտանիքը, նրա արյունակցական, ցեղական կազմի (родовой строй) ձևերը, դասակարգերի առաջացումը և նրանց փոխադարձ հարաբերությունները, պետական մարմնի աստիճանական զարգացումը և այլն, և այլն։ Ահա թե ինչ պետք է տա մեզ ամենից առաջ քիչ թե շատ լուրջ և արժեքավոր պատմությունը։ Միմիայն այդ տեսակ պատմությունը կարող է հասկանալի դարձնել մեզ համար անցքերի, գործող անձանց արարքների իմաստը, նրանց պատմական նշանակությունը և արժեքը»[1]։

Ստ. Շահումյանը ժխտում է այն պատճառաբանությունը, թե այդպիսի պատմություն գրելը դժվար է, որ իբր թե մեր պատմական աղբյուրները չեն տալիս անհրաժեշտ նյութեր։ Նա գտնում է, որ իհարկե, ավելի հեշտ է տալ անցքերի արտաքին ու մակերեսային նկարագրությունը, բերել «հոգևոր հայրերի» հազար անգամ կրկնված միամիտ հեքիաթները Թորոս իշխանի բանտում տեսած մարգարեական երազի, 15 տարի շարունակ Խորվիրապում Գրիգոր լուսավորչի կենդանի մնալու մասին, Տրդատի հրաշալի բժշկության մասին և այլն, քան գրել իսկական պատմություն, սակայն,—նշում է Ստ. Շահումյանը,—իրականում՝ մեր պատմաբանները դժբախտաբար դեռևս ծանոթ չեն հայ ժողովրդի պատմության շատ աղբյուրների, որոնցից օգտվելով՝ հնարավոր էր ավելին անել, քան արվել է։ Այդ չափազանց կարևոր և պատասխանատու խնդիրը Շահումյանը դնում է երիտասարդ մարքսիստների վրա։ Մարքսիստ երիտասարդությունը՝«զինված պատմության մատերիալիստական ըմբռնման նոր գիտական մեթոդով՝ պետք է ուսումնասիրե եղած թե հայկական և թե օտար ազգի ուղղակի և կողմնակի պատմական աղբյուրները և լույս սփռե մեր պատմական անցյալի վրա։ Փափաղյաններից այդ ուղղությամբ, իհարկե, ոչինչ չի կարելի սպասել»[2]։

Նկատի ունենալով, որ հայ կղերա-ֆեոդալական և բուրժուական արադիցիոն պատմագրության կողմից գերագնահատվել է հայ եկեղեցու դերը, այն համարվել է հայ հասարակական-քաղաքական կյանքի միակ շարժիչը, աքողվել է նրա դասակարգային էությունը, նրա որպես շահագործման ու կողոպուտի ինստիտուտի իսկական դեմքը, Ստ. Շահումյանը պատմաբանների առաջ հարց է դնում լուծելու հատկապես 4—5-րդ դարերում հասարակական-քաղաքական կյանքում հայ եկեղեցու կատարած դերը, ելակետ ընդունելով ժողովրդի շահը, հարցը քննելով միայն ժողովրդի բարօրության տեսակետից։

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 349—350։

[2] Նույն տեղում, էջ 351։ Ընդգծումը Ստ. Շահումյանինն է։

Ամփոփելով իր մտքերը, Վ. Փափազյանի և մյուսների գրվածքների մասին, Ստ. Շահումյանը «Վ. Փափազյանը պատմագետի դերում» հոդվածի վերջում գրում է. «Մենք տեսանք, որ նրանց մեջ լուրջ ու հետաքրքիր պատմական տեղեկություններ, զիտելիքներ չկան։ Պ. Փափազյանի, ինչպես և մյուս նրա ընկերակիցների նահապետական, պրիմիտիվ, կղերական պատմահայեցողությունը ոչ միայն անօգուտ ու անպտուղ է, այլև անկասկած, ֆետակար ազդեցություն միայն կարող է ունենալ ընթերցողի վրա»[1]։

Սովետահայ պատմագրությունը պետք է ավելի հանգամանորեն զբաղվի հայ ժողովրդի արժանավոր զավակ, հայ մարքսիստական պատմագիտության ականավոր ներկայացուցիչ Ստ. Շահումյանի պատմագիտական ժառանգության հարցով, որն էլ ավելի կխթանի սովետահայ պատմական մտքի հետագա զարգացմանը։

Պատմական անցյալի իդեալականացման դեմ Շահումյանի գրած հոդվածները առավել ևս ակտուալ են այսօր, երբ սովետահայ պատմագիտությունը և գրականագիտությունը անզգոք պայքար են մղում անցյալի իդեալականացման տեսիդիվների դեմ։

---

[1] Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, էջ 357։ Ընդգծումը Ստ. Շահումյանինն է։